ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

Ս. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ*)

49.

Ազնիւ Սիրելի,

Ո՞ւմ արդեօք, եթէ ոչ Ձեզ քան զամենեսեան յաւաջագոյն արժան էր այս բոպէիս ծանուցանել իմ գերդաստանի ուրախութիւնը։ Այսօր 10 ժամուն առաւօտու աղատուեցաւ Ձեր հարսը Միննա Թէոդորոսեանը պարգևելով մեզ մի առողջ փոքրիկ արու մանուկ։ Մասնակից առնելով զՁեզ մեր ուրախութեանը և քաջահաւատ լինելով որ Դուք ուրախակից կը լինիք մեզ առ ի սրտէ, ինչպէս միշտ եղած էք մեր ուրախութեանը

Մնամ շատ ողջունով

30 Նոյեմբ. 75. Ձեր Ս. Նազարեանց.
Մոսկուա։

50.

Իմ ազնիւ Բարեկամ,

Այս ինչ բաբելոնեան խառնակութիւն է մեր բարեկամների մէջ։ Պարոն Շահազիզը հրաւիրած է ինձ էգուց (Հինգշաբթի) 2½ ժամին խաշ վայելելու. այս երեկոյին Դու հրաւիրում ես ինձ նոյնպէս վաղիւն, 3 ժամին զկնի կէս աւուր սեղանակից լինել Ձեզ։ Զգիտեմ հրպէս ազատեմ իմ անձը այս դժուարութեան միջից. մի բարեկամը պատուել և միւսն անտես առնել, ընդդէմ է իմ քնքուշ զգացողութեանը։ Արդեօք կարելի՞ չէր դարման մատուցանել այս հակառակ հանդիպմանը։ Ես կարծում էի, որ Դու ևս հրաւիրուած կը լինէիր էգուց սեղանակից լինելու մեր բարեկամ Շահազիզին, որպէս կարծում եմ, որ և Շահազիզը պիտի հրաւիրուած լինի, կամ թէ հրաւիրուի Ձեզ սեղանակից լինելու։

Ուրեմն խնդրում եմ խոնարհաբար, որ Ձեր իմաստուն կարդադրութեամբ լուծանէք այս կնճիռը և այնպէս անօրինէք որ

*) Արարատ 1913 թ. ապրիլ—մայիս.

սիրելիքը և բարեկամները բաժան բաժան չլինին, այլ միասին վայելեն բարեկամական սեղանը, մի օր մինի մօտ, միւս օրը միւսի մօտ, որ առաւել յարմարաւոր և պատշաճաւոր կը լինէր ամենեցուն։ Ես միշտ պատրաստ եմ Ձեր հաց ու աղը վայելել, բայց այս բոպէիս գժուարութեան մէջ եմ. յուսամ, որ այդ դժուարութիւնը Դուք կը վերացնէք մէջտեղից։

Ցարգութեամբ Ձեր Ս. Նազարեանց

26 Յունվ. 77

Մոսկուա։

51.

Սիրելի Բարեկամ,

Ես հիւանդ լինելով, ահա հինգ օր է, որ տանից դուրս գալ կարող չեմ. սաստիկ հազում էի, այժմ ասես թէ փոքր ինչ մեղմացել է հազի տենդը։ Խնդրեմ աշխատ լինել գնալ և ստանալ մեր Գրավչենիայից մի ամսական թոշակը 245 մանն. և անյապաղ հասուցանել ինձ, որովհետև ոչինչ արծաթ չկայ տանս։

Ես ուղարկում եմ Ձեզ довѣренность այս տոմսակիս հետ միասին, որպէս պահանջում է օրէնքը։

Ցարգողապէս ողջունելով սիրելի բարեկամդ

Ցեամ

անձնուէր Ձեզ Ս. Նազարեանց.

23 Ապրիլի 1879

Այս տեղ.

Այս տոմսակիս հետ ստանում էք մի այլ ծրար, որ խնդրեմ հասուցանել ում հարկն է[1]։

---

[1]) Սրանով վերջանում են Մելքոն Փանեանցի ստացած նամակները Ս. Նազարեանցից։ Այս նամակի համարի մօտ նոյն Փանեանցի ձեռքով գրուած է՝ «վերջին», իսկ ներքեւում՝ «մահից 2 օր յառաջ գրած։

Բացի այս 51 նամակներից, Մելքոն Փանեանցի Ազգերի մէջ գտանք Նազարեանի նաեւ հետեւեալ գրութիւնները, որ յանձնում ենք տպագրութեան.—

ա. Մի նամակ, ուղղուած Փանեանցի ամուսնուն.

բ. Շնորհաւորական նամակներ (թուով 14) Մելքոն Փանեանցի անուանակոչութեան առթիւ. եւ

գ. Նախագիծ կանոնադրութեան Մոսկուայում հիմնուելիք հայ վաճառականական ընկերութեան «ժողով վաճառականների ի Մոսկուա» խորագրով։ Տ. Տէր-Յակոբ.

4.

Ազնիւ Տիկին,

Սէրը, բարեկամութիւնը և մեծարանքը, որ մի մարդ ունէր դէպ ի միւսը, միշտ կարօտ է և կենդանի գործի, սրանով ասես թէ մի փորձաքարի վերայ փորձվում էին բարեկամական սէրը և մեծարանքը։ Այս խորհրդով ահա քաղցր է ինձ, այս հանդիսաւոր օրին մատուցանել Ձեզ այս Օրինակը Սուրբ Գրքի, Ֆրանսիական լեզուով, և խնդրել Ձեզանից քաղցր սրտով ընդունել այս փոքր ընծան և գործ դնել նորան որպէս յիշատակ

Ձեզ սիրող և յարգող բարեկամ
Ս. Նազարեանցի կողմից.

Մայիսի 24 թուականին, 1856
Մոսկվայի մէջ.

1.

Մեծապատիւ Բարեկամ
Շատ օրեր խնդութեամբ, քաղցրապէս.
Ողջ առողջ և հոգով և մարմնով,
Պիտանի մարդկութեան այրապէս,
Կատարեալ և խօսքով և գործով.
Պարգևէ Ձեզ Աստուած լիապէս,
Զարդարէ Ձեր կեանքը վարդերով.
Ահա իրձ որ ըղձայ հոգեպէս
Ձեզ այսօր, Ձեր պատուող բարեկամ
Ս. Նազարեանց

Յունվարի 6-ին. 1857.
Մոսկվա։

2.

Եղբայրամեծար Բարեկամ,

Շնորհաւորելով առ ի սրտէ Ձեր պատուական անունի տօնը, աղաչում ենք Ամենաբարձրեալ Տէրը պարգևել Ձեզ դեռ ևս երկար օրեր և քաղցր կեանք, հոգևոր և մարմնաւոր առողջութիւն ամենայն բարեմասնութեամբը, որ և մեք կարողանանք աւելի երկար օրեր խնդալ և ուրախանալ Ձեզանով, Ձեր քաղցր բարեկամու-

թեամբը, Ձեր անխարդախ սիրովը դէպ ի մեր գերդաստունը։

Մաղթելով Ձեզ ամենայն երկրաւոր և երկնաւոր բարիքը, մնամք Ձեզ յարգող ու սիրող բարեկամք

Ս. Նազարեանց

Յունվարի 6-ին, 1859. Է. Նազարեանց

Մոսկվա.

3.

Պատուական Բարեկամ,

Շնորհաւորելով այսօր Ձեր տօնը ես և իմ ամուսինս, խնդրում ենք ամենաբարձեալ տիրոջից պարգևել Ձեզ շատ օրեր առողջութեամբ և բաղդաւորութեամբ այս երկրաւոր կեանքիս մէջ, ինչքան օր այդ բարիքը կարելի էին մարդուս համար այս ցաւալից ու ուրախալից աշխարհիս մէջ։ Անխառն գինի չէ սահմանված ոչ մինին մեզանից. և այս պատճառով մեր քրիստոնէական պարտականութիւնն է միշտ շնորհակալ լինել նախախնամութեան տնօրէնութիւնից և կեանքի խառնակութեան մէջ չմոռանալ մեր երկնաքաղաքացի կոչումը, այսինքն թէ մարդս ծնած էր առաքինութեան համար։

Բաղցր է եղած միշտ մեր սրտին պատուել և մեծարել Ձեզ իբրև մեր տան բարեկամ. ես առաւել քաղցր է մեզ յուսալ, որ այդպիսի ես կը հաճիք Դուք մնալ միշտ, պահպանելով մեր համար Ձեր քաղցր բարեկամութիւնը։

Յարգութեամբ Ձեր անձնանուէր

Յունվարի 6-ին 1860 Ս. Նազարեանց

Մոսկուա Էմ. Նազարեանց։

4.

Եղբայրապատիւ Բարեկամ

Մելքոն Գասպարեանց

Շնորհաւորելով Ձեր տօնը, խնդրում եմ վասն Ձեր ամենակարող Տիրոջից մի անխառն առողջութիւն կեանքի, խաղաղ օրեր երջանկութեան, հոգևոր և մարմնաւոր, որ շատ տարի Դուք և Ձեր բարեկամքը արժանանան այս տօնին, ուրախանան Ձեր առաքինի և մարդկութեանը պիտանի կեանքի վերայ և փառք տան Աստուծուն այն քաղցր պարգևի համար, որ Ձեզանով շնորհել է նա թէ իւր ազգին և թէ իւր բարեկամներին։

Այսպիսի առ ի սրտէ զգացողութեամբք
Ձեզ միշտ
Եղբայրապատիւ յարգութեամբ մնծարող
Ս. Նազարեանց.

ի 6-ին Յունուարի 1862
Մոսկվա։

5.

Ազնիւ Մելքոմ Գասպարեան
Այս աշխարհում լի օձերով, կարիճներով,
Ուր փչում են շատ դառնաշունչ փոթորիկներ,
Մինը տանջուած իւր ընկերի չար ախտերով,
Միւսն անարժան կրելով բաղդի խոր հարուածներ—
Այս աշխարհում լաւ է ունել մի բարեկամ.
Որով վերայ կարող էր մարդ, ցաւից բեկուած,
Հաստատել իւր թուլացած մէջք և շունչ քարշել.
Որ կարող էր ազնիւ սրտից, սիրով լցուած,
Իւր խոցերին, իւր վէրքերին դեղ գտանել—
Այս աշխարհում լաւ է ունել մի բարեկամ։
Տկար, կարօտ մահկանացուին բիւր երանի,
Որին բաղդը մի բարեկամ է շնորհել.
Նա կարող է ծանրութիւնը իւր ցաւերի
Բարեկամի քաղցր գրկում թեթևացնել—
Վայելուչ է մարդուս ունել մի բարեկամ։
Եւ ինձ, Մելքոմ, Դու իմ միակ Հայկազն եղբայր,
Այս անապատ օտարութեան շրջակայքում,
Բիւր երանի, որ կարող եմ անկեղծաբար
Ասել Քեզ իմ «Սրտի Եղբայրդայս աշխարհում,
Եւ համբուրել ազնիւ ճակատդ այս մաղթանքով
Կեցցես Դու իմ Մելքոմ, կեցցես,
Շատ տարիներ վասն իմ կեցցես։
Ս. Նազարեանց.

6-ին Յունվարի 1865 թ.
Մոսկուա։
(Եարունակելի) Յ. Տէր Յակովբեանց.